Արձանագրություն N 3
ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08.10.2019 թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Աշ. Գրիգորյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 30.09.2019թ.

- Հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ: <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- Ծանուցվել էր <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման - արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Միրզոյան

Անդամ՝ _____ Դ. Շատվերյան

_____ Ռ. Եղիազարյան

_____ Աշ. Գրիգորյան

_____ Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան